

## Էպոսի ուսուցման առանձնահատկությունները ժամանակակից տարրական դպրոցում

*Մամիկյան Արմինե*

**Հանգուցային բառեր.** բանահյուսություն, ընթերցանության դաս, մտագրոհ, գուգահեռ նկարագրողումներ, բառարան, միջառարկայական ուսումնական ծրագիր, «Շրջագայություն գրքի բաժիններով» կառուցողական ռազմավարություն

Ազգային նշանավոր դեմքերի, պատմական գիտելիքների ուսուցումը հայկական դպրոցներում կարևորվել է դեռևս հնուտ մանկավարժ և կրթության գործի երկարամյա կազմակերպիչ Լևոն Շանթի կողմից [8, 498]: «Մասունցի Դավիթ» էպոսի դարավոր պատմությունն ապացուցում է, թե ինչպես է բանահյուսական այդ գանձը դարերի ի վեր ոգևորել հայ ժողովրդին, իշխել նրա մտքի ու սրտի վրա և հասել նոր ժամանակներին ու այսօր էլ իր գաղափարներով խիստ այժմեական է և հուզիչ [7, 21]:

Ժամանակակից տարրական դպրոցում առանձնահատուկ տեղ ունի հայկական ժողովրդական էպոսի դասավանդումը, որն սկսվում է այբբենական շրջանից՝ մասնավորապես **Մ** հնչյուն-տառի ուսուցումից: Աշակերտները, սովորելով **Մ** և **Մ** տառերը, պետք է կարողանան վերականգնել **Մանասար** անվանման բաց թողնված **և** և **ր** տառերը [9, 49]: Հենց այս դասից հետո առաջարկում ենք արտադասարանային հանդիպում կազմակերպել «Մասունցի Դավիթ» մուլտիմիդի ղիտելու:

Բոլոր տարրական դասարաններում շարունակվում է էպոսի ուսուցումը ընթերցանության դասերի շրջանակներում, որտեղ կարևորվում են աշակերտի ուսումնական, ընթերցողական գործունեությունը և ուսուցման անհատական մոտեցումը: Էպոսի ուսուցումը կազմակերպելով համագործակցային արդիական տեխնոլոգիաներով՝ առաջարկում ենք թեմայի մուտքը կազմակերպել աշակերտների տատիկ-պապիկներից մեկի օգնությամբ: Մեր ուսուցչական գործունեության ընթացքում մանկան մեթոդաբանություն կիրառում ենք արդեն 3-րդ անգամ: Ծանոթանալով աշակերտների տատիկների և պապիկների հետ՝ նրանցից խոսքաշատ մեկին հրավիրում ենք ժողովրդական բառ ու բանով ներկայացնել էպոսի ընդհանուր բովանդակությունը՝ ստեղծելով կոլորիտային դաս, որի ընթացքում կարևորվում են մեծի նկատմամբ ունեցած հարգանքը, ժողովրդական խոսքն ու խրատը: Այս աշխատանքը հետագայում հիմք է հանդիսանում էպոսի հատվածների՝ «Մտագրոհ» [5, 85] մեթոդական ռազմավարությամբ ուսուցման, որը գործածվում է աշակերտների նախկին գիտելիքներն ակտիվացնելու նպատակով:

Անդրադառնալով էպոսի ստեղծման նախադրյալներին՝ այն ներկայացվում է որպես ժողովրդական ստեղծագործություն, որն իր մեջ է ամփոփում այն բոլոր ժողովրդական խոսքերը, որոնք սովորել են աշակերտներն իրենց ուսումնական գործունեության ընթացքում:

2-րդ դասարանում էպոսը դասավանդվում է «Հայաստանը մեր հայրենիքն է» [11, 121] թեմայի շրջանակներում: Աշակերտներին հանձնարարվում է կարդալ «Մասունցի Դավիթ կռիվը Մարա Մելիքի դեմ» վերնագրով հատվածը [11, 124],

որտեղ Մսրա Մելիքը ներկայացվում է որպես սարի չափ մի հսկա, որն ուներ անհամար գորք, որի բազմությունը պատկերելու համար հեղինակները էպոսից ներկայացնում են գետի ջրերը խմելով ցամաքեցնելու չափազանցությունը: Մելիքն իր ամբողջ գորքով հարձակվում է Մասունցի Դավթի վրա, որը, ի տարբերություն Մսրա Մելիքի, կռվի է դուրս գալիս միայնակ՝ իր հետ վերցնելով միայն Թուր Կեծակին և Քուռկիկ Ջալալին: Սկսվում է կռիվը, որտեղ առաջինը խփելու իրավունքը վերապահվում է Մսրա Մելիքին: Հատվածի առաջին մասի ընթերցանությունից հետո աշակերտներին առաջարկվում է պատասխանել հետևյալ հարցերին.

1. Ինչո՞ւ Դավիթը գնաց Մելիքի դեմ կռվի:

2. Քո կարծիքով ինչո՞ւ Դավիթը համաձայնեց, որ առաջինը Մելիքը խփի:

Առաջին դասարանից ծանոթ լինելով էպոսի ընդհանուր բովանդակությանը՝ աշակերտները կարողանում են հստակ պատասխանել հարցերին՝ հիշելով Մասունցի Դավթի ու Մելիքի եղբայր լինելու հանգամանքը և մանկական կռիվները: Որպես հավելյալ տեղեկություն՝ գրքում նշվում է, որ «Դավթի հայրը և որդին ունեն նույն անունը: Դավթի որդու անունը Միեր է»: Այնուհետև իբրև տրամաբանական հարց ներկայացվում է, թե ինչ է Դավթի հոր անունը: Աշակերտները հիշում են Մեծ Միերին, նրա կատարած քաջագործությունները, ինչպես նաև Մսրա Մելիքի հայրը լինելը:

Ժողովրդական յուրաքանչյուր ավանդույթ շարունակվում է նաև այսօր, և աշակերտների մեջ շատ են լինում այն աղջիկներն ու տղաները, որոնք կրում են իրենց տատիկների և պապիկների անունները: Այսպիսով կատարվում է անդրադարձ աշակերտների անվանադրման հանգամանքին, փորձում ենք ստուգաբանել նրանց անունները, հանգամանք, որ միշտ հետաքրքրությամբ են ունկնդրում աշակերտները:

Հատվածի երկրորդ մասում ներկայացվում է Մելիքի հարձակվելը [11, 125], որի ուժգնությունը համեմատվում է երկրաշարժի հետ, որից փոշու ամպեր են բարձրանում: Սակայն Դավիթը անսասան է մնում, և հարձակվելու հերթը հասնում է իրեն: Մելիքը վախից մտնում է այն նույն փոսի մեջ, որ փորել էր Դավթի համար: Դավիթը հեծնում է Քուռկիկ Ջալալին, Թուր Կեծակիով հարվածում է Մելիքին և նրան երկու մասի է բաժանում: Մնացած գորքին Դավիթը խաղաղության կոչով տուն է ուղարկում՝ երկրում հաստատելով սեր և միություն:

Այստեղ աշակերտներին հանձնարարվում է պատասխանել, թե ինչու Դավիթը չի կոտորում թշնամու գորքին, որտեղ աշակերտները հիշում են ծերունու խոսքերը: Էպոսի բովանդակության մեջ կարևորելով կերպարաստեղծման գաղափարը՝ աշակերտներին հանձնարարվում է ներկայացնել Մսրա Մելիքի և Մասունցի Դավթի բնավորության առանձնահատկությունները՝ արտահայտելով իրենց սեփական տեսակետները:

Տարրական դասարաններում կարևորվում են ներկայացված ընթերցանության դասերի գուգահեռ նկարագրողումները: Մասունցի Դավթի մասին պատմող հատվածին գուգահեռ ներկայացված են 4 նկարներ, որոնք աշակերտների կողմից հիմնականում վերնագրվում են հետևյալ կերպ՝ «Մարութա Բարձր Աստվածածինը պահապան Մասունցի Դավթին», «Ծերունի իմաստունն ու Մասունցի Դավիթը», «Մսրա Մելիքի և Դավթի գրույցը», «Մսրա Մելիքը խոր փոսի մեջ»: Նկարա-

գարդումները օգնում են հավելյալ տեղեկություններ հաղորդել էպոսի մասին և աշակերտների համար տեսանելի են դարձնում իրենց կարդացածն ու լսածը:

2-րդ դասարանում «Սասունցի Դավիթ» վերնագրով հատված է առաջարկվում նաև գրավոր աշխատանքների դասերին՝ հանձնարարելով գրել փոխադրություն: Հետագա դասարանների գրավոր աշխատանքների ցանկում էպոսից հատվածներ չկան: Այդ պատճառով էլ ուսուցիչներս ենք կազմակերպում էպոսից գրառումներ կատարելու դասընթացները [1, 56]:

Այսպիսով երկրորդ դասարանի վերջում աշակերտների ուշադրությունը դարձնելով ստեղծագործության հիմքում ընկած գլխավոր խնդիրների վրա՝ սովորեցնում ենք ստեղծագործաբար վերարտադրել ինչպես ընթերցանության նյութի, այնպես էլ զուգադիր նկարների բովանդակությունները [3, 36]:

3-րդ դասարանում աշակերտները վերհիշում են Սասունցի Դավթին և Մարա Մելիքին բնութագրող բառերը **համարձակ** և **նենգ** բառերի հոմանիշները սովորելիս: Ներկայացված են Դավթի և Մելիքի նկարները՝ հանձնարարելով բնութագրել հերոսներին [10, 43]: Իսկ բուն «Սասունցի Դավիթ» էպոսից հատված ընթերցում են «Հայրենի՛ք, ես մի գարկն եմ քո բազկի» թեմայի շրջանակներում [10, 81]: Ծանոթանալով Հայկի և Բելի հետ՝ աշակերտներին հանձնարարում ենք կատարել կերպարների համեմատական վերլուծություն: Այնուհետև ընթերցում ենք «Սասունցի Դավիթ» հատվածը [10, 86], որտեղ պատկերվում է, թե ինչպիսին էր մեր ազգային հերոսը աշակերտների տարիքում:

Այստեղ հանձնարարվում է անդրադառնալ էպոսի ժանրային առանձնահատկություններին: «Փոքրիկ բառարանում» էպոս բառը բացատրված է որպես «ժողովրդական ստեղծագործություն՝ հին հերոսների սխրանքների մասին» [10, 157]: Հիմք ընդունելով ներկայացված բացատրությունը՝ անդրադառնում ենք որպես մեջբերում ներկայացված Հովհաննես Թումանյանի հետևյալ խոսքերին. «Շողովուրդները ոչ մի բանի մեջ էնքան պարզ ու պայծառ չեն երևում, ինչքան իրենց ազգային էպոսի մեջ»: Այստեղ ապահովելով միջառարկայական կապերը՝ առաջարկում ենք կազմակերպել ընդհանրական դաս ռուսերենի և անգլերենի ուսուցիչների ընկերակցությամբ: Նրանք պատմում են ռուս և անգլիացի ժողովուրդների էպոսների մասին, և աշակերտների համար ավելի հետաքրքիր է դառնում օտար լեզուներ սովորելու հանգամանքը՝ որպես միջլակության հարաբերությունների բացահայտման բանալի:

Այսպիսով ապահովվում է միասնացված ինտեգրված ուսումնական ծրագրի պլանավորման միջառարկայական ուսումնական ծրագիրը: Այս դեպքում առարկաների միջև գոյություն ունեցող ընդհանրությունները կարևորում են սովորել սովորեցնելը: «Առարկաների ոլորտներն իրար միացնելով՝ աշակերտները սովորում են, որ բարձրակարգ մտածողության հմտություններն ընդհանուր բնույթ ունեն և կարող են օգտագործվել դասարանից դուրս» [6, 93]:

3-րդ դասարանի «Մայրենիի» դասագրքում մեջբերված առաջին հատվածում ներկայացվում է գառնարած Դավիթը, որ քաղաք էր բերել անտառի բոլոր կենդանիներին: Աշակերտներին հանձնարարվում է պատասխանել պատճառահետևանքային իմաստ ունեցող հետևյալ հարցերին.

1. Ինչո՞ւ վախեցան մարդիկ:

2. Դավիթը ինչո՞ւ այդպես վարվեց:

3. Գազանները հոտի մեջ ինչո՞ւ իրար չէին հոշոտում [10, 86]:

Այստեղ պատասխանները լինում են բազմազան, հատկապես ստեղծագործել սիրող աշակերտներն սկսում են նորանոր պատմություններով զարդարել էպոսը արտահայտելով իրենց վերաբերմունքը Դավթի նկատմամբ: Նրանց նույնպես հանձնարվում է պատմել իրենց կատարած քաջագործությունների և մարդկանց վերաբերմունքի մասին:

Երկրորդ հատվածում աշակերտները տեղեկանում են ժողովրդի վերաբերմունքին, նրանք Դավթին խենթ են անվանում և խնդրում Ձենով Օհանին մի ուրիշ գործի դնել Դավթին: Անդրադառնալով Ձենով Օհանին՝ աշակերտներին են ներկայացվում նրա հարազատները՝ Քեռի Թորոսը, Ձենով Օհանը և Յոան Վերգոն: Այսպիսով պարզ է դառնում Շ. Թումանյանի խոսքը՝ էպոսի մասին, որտեղ կերպավորվել են ազգի բոլոր մարդիկ՝ խորհրդանշելով մարդկային տարբեր բնավորություններ: Դասի վերջում հանձնարարվում է պատմել, թե ինչ կլինի հետո աշակերտների պատկերացմամբ, ու քանի որ նրանք տեղյակ են ամբողջ պատմությունը, փորձում են վերհիշել Մասուցի Դավթի քաջագործությունները: Այստեղ նույնպես գործողությունները ներկայացված են զուգահեռ պատկերներով: Իսկ դասի վերջում հանձնարարվում է վերադասավորել խառը նկարները և վերնագրել, որոնցից հիշարժան են հետևյալները՝ «Դավիթը գառներին Մարութա սար է բարձրացնում», «Դավթի կանչը», «Դավիթն ու վայրի կենդանիները», «Դավթի զարմանքը քաղաքում», «Մինչ Դավիթը քնած է, կենդանիները փախչում են», «Ձենով Օհանն ու քաղաքացիները» [10, 88]:

Դասի վերջում հանձնարարվում է ընթերցել Շ. Թումանյանի «Մասունցի Դավիթ» մշակումը, որից անզիբ հատվածները աշակերտները սիրով են սովորում և գործածում իրենց խաղերի ժամանակ:

Այսպիսով, շարունակելով «Շրջագայություն գրքի բաժիններով» կառուցողական ռազմավարությունը [10, 88]՝ աշակերտները ներկայացնում են, թե ինչ գիտեն, ինչ են ուզում իմանալ և ինչ սովորեցին:

4-րդ դասարանում Հայաստանի յոթ և բյուր հրաշալիքների վերջին կայանը Մասունն է, որտեղ էլ ապրում է Մասունցի Դավիթը [2, 3-36]: Աշակերտները հիշում են Մասունցի Դավթին՝ որպես մեր պայքարի, հերոսության խորհրդանիշ, որին իրենք ծանոթ են «Այբբենարանից»: Աշակերտներին հանձնարարվում է հիշել Մասուցի Դավթի սխրանքները:

Այստեղ աշակերտներին «Մասունցի Դավիթ» ստեղծագործությունը ներկայացվում է **դյուցազներգություն** բառով, որի կազմության բացատրությունը խթանում է բառի ճիշտ ուղղագրությանը և ուղղախոսությանը: Դյուցազներգության հեղինակը ժողովուրդն է, սակայն այն առաջինը գրի է առել հայ մեծ բանահավաք Գարեգին Սրվանձոյանցը:

4-րդ դասարանում աշակերտները կարդում են «Մասունցի Դավիթը կոչում է դևերի դեմ» հատվածը [2, 36]: Մինչ ընթերցանությունը հանձնարվում է հորինել պատմություն ներկայացված նկարի շուրջ, այստեղ Դավիթը նախորդների համար հարիսա է բերում՝ ապշեցնելով նրանց և իմանում, որ քառասուն ավազակ դևերը տարել են քառասուն տավար: Տեսնելով հուսահատված ընկերներին՝ նա

որոշում է գնալ դների մոտ և պատժել նրանց: Այս հատվածում աշակերտների համար բացահայտվում են Դավթի հետևյալ հատկանիշները.

- ուրիշին օգտակար լինելու պատրաստակամությունը,
- հսկայական ուժը,
- ներողամտությունը թույլերի նկատմամբ,
- վստահությունն իր ուժերի նկատմամբ,
- հոգատարությունը թույլերի նկատմամբ:

Այնուհետև ներկայացվում է Դավթի կռիվը դների հետ, նրանց կոտորելը, Սասնա տան ոսկիները գտնելը, նախորդներին օգնելը: Դավիթը գնում է քեռի Թորոսի մոտ և Սասնա տան համար անսպառ ոսկի է բերում ու այլևս նախորդ չի լինում: Իր համար ընտրում է միայն մեկ ձի: Բնագրի յուրաքանչյուր հատված զարմացնում է աշակերտներին, քանի որ Դավթի յուրաքանչյուր քայլը անկանխատեսելի է: Հատկապես ծիծաղելի է այն պահը, որտեղ Դավիթը նախորդներին հանձնարարում է հարիսան անալի ուտել, իսկ աղն էլ երեկոյան տանը ուտել: Դավթի քաջագործությունները շարունակում են հիացնել, հետաքրքրել և ոգևորել աշակերտներին, նրանք պատմություններ են պատմում Դավթի մասին, կատարում են նկարագրողումներ և վերջում հանդիսատեսին են ներկայացնում բովանդակալից բեմականացում: Սասնա տան դյուցազունների մասին մյուս տեղեկությունները ներկայացվում են ավելին իմանալ ուզող աշակերտներին. «Սասունցի Դավթի պապը Սանասարն էր, որն իր Բաղդասար եղբոր հետ հսկա ժայռակտորներով կառուցեց Սասնա բերդը: Սանասարի տղան՝ Մհերը, Դավթի հայրն էր: Նա մեն-մենակ, մերկ ձեռքերով հաղթեց առյուծին՝ և այդ պատճառով նրան կոչեցին Առյուծ Մհեր» [2, 42]:

Դավթի մասին պատմությունները ավարտվում են հետևյալ հեղինակային քառատողով.

Արդեն չորս տարի դու Դավթի հետ ես,  
Ինչպիսին է նա՝ արդեն լավ գիտես,  
Նրան սիրեցիր, նա էլ սիրեց քեզ,  
Դու արդեն, կարծես, մի քիչ Դավիթ ես:

Էպոսի բառապաշարը առաջարկում ենք ներկայացնել էպոսաբառարանում [12], որտեղ բառերը դասակարգվում են ըստ խոսքիմասային առանձնահատկությունների, ձևաբանական խմբերի և կապակցման եղանակների:

Այսպիսով աշակերտները կարողանում են 3-րդ դեմքով և թեմատիկ բառապաշարով վերարտադրել դյուցազներգությունը՝ որպես հաղորդում [4, 12-13]:

3-րդ 4-րդ դասարաններում առաջարկվում է շարունակել էպոսի ընթերցանությունը նաև ինքնուրույն ընթերցանության ժամերին՝ ձևավորելով ընթերցողական ինքնուրույնություն, որն ուսուցման առաջին աստիճանի վերջնական նպատակն է:

Հայ ժողովրդական էպոսում հավաքական ժողովուրդն իր սիրելի հերոսին՝ Դավթին, դնում է ամենատարբեր կենսական իրավիճակներում և կերտում, հիրավի, ամնոռաց կերպար: Դավիթն արտասովոր մանուկ է. մեծանում է ոչ թե օրերով, այլ ժամերով, արտակարգ ուժի տեր է, ունի մանկական միամտություն, սակայն միաժամանակ խելացի է ու շրջահայաց: Դավթի բնավորության հիմնական գծե-

րից է մեծահոգությունը: Դավիթն անսահման սիրում է իր հայրենի եզերքը, հարազատներին, հասարակ ժողովրդին և շարունակ օգնում է նրանց: Նա բարի է ու աստվածավախ: Տանել չի կարողանում ոչ մի բռնություն: Դավիթն անհարիր են նենգությունն ու խարդախությունը. հավատում է Մսրա Մելիքի սիրալիր խոսքերին ու ընկնում նրա պատրաստած փոսը [7, 24]:

Էպոսի ուսուցման ժամանակ հատկապես կարևորվում է ստեղծագործության կերպարային համակարգը, հերոսների գործունեությունը հատկապես զգայական ներգործություն է ունենում աշակերտների վրա՝ զարգացնելով տրամաբանական-ինտելեկտուալ մտածողությունը: Էպոսի ուսուցման դասի համար առաջարկում ենք հետևյալ տրամաբանական քայլերը՝ ունկնդրում, մուլտֆիլմի դիտում, քննարկում, բնագրի ընթերցանություն, ընկալման ստուգման զրույց՝ վերլուծական եղանակով: Բնագրի ընթերցանությունից և յուրացումից հետո կատարվում են արտահայտիչ բանասիրտական վարժանքներ տրամաբանական հարցադրումների միջոցով, որոնք հնարավորություն կստեղծեն աշակերտների ազատ ինքնաարտահայտման համար:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Ջուլիետա Գյուլամիրյան**, Արտագրությունների, թելադրությունների, փոխադրությունների, շարադրությունների ձեռնարկ տարրական դպրոցի համար, Զանգակ հրատակչություն, Երևան, 2009:
2. **Կարինե Թորոսյան, Վաչագան Սարգսյան, Հեղինե Խաչատրյան, Կարինե Չիբուխյան**, Մայրենի 4, ՄԱՆՄԱՐ հրատարակչություն, Երևան, 2012:
3. **Կարինե Թորոսյան, Վաչագան Ա. Սարգսյան, Կարինե Չիբուխյան**, Մայրենի 2, Թեմատիկ պլանավորում, Երևան, 2010:  
[file:///C:/Users/COMP/Downloads/2-tematik\\_plan.pdf](file:///C:/Users/COMP/Downloads/2-tematik_plan.pdf):
4. **Կարինե Թորոսյան, Վաչագան Ա. Սարգսյան**, Կարինե Չիբուխյան, 4-րդ դասարանի թեմատիկ պլանավորում, <https://lib.armedu.am/resource/760>:
5. **Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները**, Ձեռնարկ ուսուցիչների համար, «Տիգրան Մեծ» հրատարակչություն, Երևան, 2004:
6. **Կրթակարգի մշակման և ինտեգրման մոտեցումներ**, Ձեռնարկ ուսուցիչների համար, Այրեքս հրատարակչություն, Երևան, 2004:
7. **Գայանե Մարդյան**, «Մասունցի Դավիթ» էպոսի ուսուցման մի քանի խնդիրներ, Երևան, 2015:  
<https://aspu.am/website/images/files/GAYANE%20MARDYAN>:
8. **Լևոն Շանթ**, Երկերի ժողովածու, հ.5, Երևան, 2012, էջ 498:
9. **Վաչագան Ա. Սարգսյան**, Այբբենարան, ՄԱՆՄԱՐ հրատարակչություն, Երևան, 2012., էջ 49:
10. **Վաչագան Ա Սարգսյան, Հեղինե Խաչատրյան, Կարինե Թորոսյան, Ելենա Զիլավյան**, Մայրենի 3, Մակմիլան Արմենիա, Երևան, 2009:
11. **Վաչագան Ա. Սարգսյան, Մուսաննա Գրիգորյան, Կարինե Թորոսյան, Հեղինե Խաչատրյան**, Մայրենի 2, ՄԱՆՄԱՐ հրատարակչություն, Երևան, 2010:
12. <https://armineab.wordpress.com/2016/01/11/>

## Особенности изучения эпоса в современной начальной школе

Самвелян Армине

### Резюме

**Ключевые слова:** фольклор, урок чтения, мозговой штурм, параллельные иллюстрации, словарь, межпредметная учебная программа, структурная стратегия “Путешествие по разделам книги”.

В современной начальной школе особое место имеет преподавание армянского народного эпоса, которое начинается с букварного периода.

Эпосом называют произведения устного народного творчества, включающие в себя народные высказывания, которые изучают ученики в ходе учебной деятельности.

Мы предлагаем провести обучение эпоса с помощью установления междисциплинарных отношений, также ссылаясь на эпосы русских и английских народов и на их общие черты. Таким образом, изучение иностранного языка становится более интересным для учеников как ключ к открытию межкультурных отношений.

Обучение эпоса воспитывает у детей:

- готовность помогать другим;
- снисходительность к слабым;
- веру в собственные силы;
- заботу о слабых.

Особенно важным в изучении эпоса является образная система произведения. Действия героев оказывают большое эмоциональное воздействие на учеников, развивая логико-интеллектуальное мышление. Для проведения урока по изучению эпоса мы предлагаем следующие логические шаги: прослушивание, просмотр мультфильма, обсуждение, чтение текста, аналитическая беседа. После чтения и освоения текста с помощью логических вопросов выполняются упражнения, которые позволяют ученикам свободно выражать свои мысли.

## The Peculiarities of Teaching Epos at Modern Elementary School

*Samvelyan Armine*

### Summary

**Key words:** *folklore, a reading lesson, brainstorming, parallel illustrations, dictionary, interdisciplinary curriculum, constructive strategy on "Travelling through sections of book "*

The teaching of Armenian folk epos has a special place at modern elementary school, which begins from the alphabetical period.

The epos belongs to the category of folk literature, which summarizes all the popular words that students have learned during their educational process.

We suggest teaching the epic through establishing interdisciplinary relationships, at the same time referring to the epic of the Russian and English peoples and their common features. Thus, learning foreign languages becomes more interesting for students as a key to discovering intercultural relations.

Teaching the epic instills in children

- readiness to help others,
- a huge power,
- forgiveness towards the weak people,
- trust in one's own strength,
- care for the weak.

During the process of teaching epos, the characters of the work and the activity of characters, which has mainly sensual effect on the pupils, by developing logical and intellectual thinking, are particularly important. We suggest that you should take the following logical steps during the lesson of teaching about epos: listening, watching the cartoon, discussion, reading original text, perceptive talk in an analytical way. After reading and understanding the original text, expressive vocabulary exercises are done through logical questions that will give the pupils an opportunity to express themselves freely.